



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ N 78-Ն

«18» հուլիսի 2025 թվականի

գյուղ Ամասիա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ 2026-2028 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ԾԱԽՍԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 5-րդ մասի և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 27.1-ին հոդվածի դրույթներով, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի ավագանին

որոշում է՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի 2026-2028 թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագիրը՝ համաձայն թիվ թիվ 1-4 հավելվածների:

2. Ընդունել ի գիտություն, որ համայնքի կարճաժամկետ խնդիրները դիտարկվում են արդեն միջնաժամկետ կանխատեսումների համատեքստում, եկամուտները կանխատեսվում են համայնքային բյուջեին ամրագրված եկամուտներին առնչվող հարաբերությունները կարգավորող Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, ծախսերը հստակ արտացոլում են համայնքի զարգացման առաջնահերթություններն ու գերակայություններն ըստ գործառնական ոլորտների:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝**

Կողմ՝ 9

Դեմ՝ 0

Ձեռնպահ՝ 0

Հարությունյան Զ.
Ղուկասյան Ա.
Ախցիսեցյան Է.
Մարդոյան Գ.
Զաքարյան Հ.
Արսենյան Զ.
Գևորգյան Հ.
Մարտիրոսյան Հ.
Թադևոսյան Է.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



Զ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

«18» հուլիսի 2025 թվական
գյուղ Ամասիա

Հավելված N 1
Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի
Ամասիա համայնքի ավագանու
2025 թվականի հուլիսի 18-ի թիվ 78 -Ն որոշման

Ծ Ր Ա Գ Ի Ր

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՄԱՍԻԱ
ՀԱՄԱՅՆՔԻ**

2026-2028 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ԾԱԽՍԵՐԻ

2026-2028 ԹԹ.

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության Ամասիա համայնքի 2026-2028 թվականների միջնաժամկետ ծախսային ծրագիրը (այսուհետև՝ ՄԺԾԾ) համայնքի առաջիկա երեք տարիների զարգացման ռազմավարական ֆինանսական փաստաթուղթ է, որի հիմքում ընկած են համայնքի զարգացման հնգամյա ծրագրերով սահմանված համայնքի զարգացման հիմնախնդիրները, ինչպես նաև ՀՀ կառավարության ծրագրերով որդեգրված առաջնահերթ ուղղությունները, որոնք արտացոլված են վերջին տարիներին ՀՀ ֆինանսների նախարարության կողմից մշակված գերակայություններում:

2026-2028 թվականների միջնաժամկետ հատվածում Ամասիա համայնքի ռազմավարության հիմնական ուղղություններն են գյուղատնտեսություն, ջրամատակարարում, արտաքին լուսավորություն, աղբահանություն, մշակույթ: Նշված բնագավառներում էական ներդրումներ իրականացնելու համար նախատեսված է դիմել ինչպես սուբվենցիոն ծրագրերի, այնպես էլ դոնոր կազմակերպությունների կողմից հայտարարվող դրամաշնորհային մրցույթների: Կապիտալ ներդրումների իրականացման համար անհրաժեշտություն է ունենալ ֆոնդային բյուջե, սակայն համայնքի ֆոնդային ռեսուրսները սահմանափակ են, ուստի առաջիկա երեք տարիներին նախատեսված է ձևավորել վարչական բյուջեի առավելագույն՝ 20% պահուստային ֆոնդ, որպեսզի հնարավոր լինի իրականացնել վարչական բյուջեի պահուստային ֆոնդից ֆոնդային բյուջե հատկացումներ:

Հայաստանի Հանրապետության Ամասիա համայնքի բյուջեի եկամուտների և ծախսերի կանխատեսումների առանձնահատկությունները

Հայաստանի Հանրապետության տեղական ինքնակառավարման համակարգում օրենսդրությամբ սահմանվել է համայնքում իրականացվող ռազմավարական ծրագրավորման երեք փուլ, որոնք տարբերվում են միմյանցից ինչպես դրանց ծրագրավորման ժամանակային հորիզոնով, այնպես էլ յուրաքանչյուր փուլում ծրագրավորվող տարրերի ագրեգացման մակարդակով: Այսպես, կախված ծրագրավորման ժամանակային հորիզոնից՝ նախատեսվում է հնգամյա ժամանակահատվածի (երկարաժամկետ), եռամյա ժամանակահատվածի (միջնաժամկետ) և մեկ տարվա ժամանակահատվածի (կարճաժամկետ) ծրագրերի մշակում: Երկարաժամկետ ծրագրերում ծրագրային տարրերը ներկայացվում են ագրեգացման առավել բարձր մակարդակով, քան միջնաժամկետ ծրագրերում, իսկ միջնաժամկետ ծրագրերում դրանց մակարդակն ավելի բարձր է, քան կարճաժամկետ ծրագրերում:

Վերը նշված ծրագրավորման երեք փուլերը փոխկապակցված են, և յուրաքանչյուր փուլում կազմված և սահմանված կարգով հաստատված ծրագիրը հիմք է հանդիսանում հաջորդ

փուլում կազմվելիք ծրագրի համար: Մասնավորապես, երկարաժամկետ ծրագիրը հիմք է հանդիսանում միջնաժամկետ ծրագրի մշակման համար, իսկ միջնաժամկետ ծրագիրը իր հերթին հիմք է հանդիսանում կարճաժամկետ ծրագրի մշակման համար:

Համայնքի երկարաժամկետ ծրագիրը՝ համայնքի զարգացման հնգամյա ծրագիրն է, միջնաժամկետ ծրագիրը՝ երեք տարվա համար կազմվող համայնքի միջնաժամկետ ծախսերի ծրագիրն է, իսկ կարճաժամկետ ծրագիրը՝ մեկ տարվա համար կազմվող համայնքի բյուջեն է: Եթե համայնքի զարգացման ծրագիրը հաստատվում է մեկ անգամ ավագանու լիազարությունների ամբողջ ժամանակահատվածի՝ 5 տարվա համար (անհրաժեշտության դեպքում կարող են լինել փոփոխություններ), ապա համայնքի միջնաժամկետ ծախսերի ծրագիրը մշակվում և հաստատվում է յուրաքանչյուր տարի՝ առաջիկա 3 տարվա համար:

Համայնքի հնգամյա զարգացման ծրագիրը համայնքի սոցիալ-տնտեսական իրավիճակի վերլուծության և առկա հիմնախնդիրների բացահայտման, ֆինանսական, տնտեսական, բնական և մարդկային ռեսուրսների գնահատման արդյունքում նպատակային զարգացման տեսանկյունից ձեռնարկվելիք քայլերի ամբողջությունն արտահայտող փաստաթուղթ է, որը նախատեսում է ռազմավարական կտրվածքով համայնքի հիմնախնդիրների արդյունավետ լուծում: Համայնքի զարգացման հնգամյա ծրագրի դրույթների իրագործման հիմնական գործիքը, որը հնարավորություն է տալու առավել իրատեսական, առարկայական դարձնել համայնքի զարգացման հնգամյա ծրագիրը՝ առաջիկա երեք տարվա համայնքի միջնաժամկետ ծախսերի ծրագիրն է (ՄԺԾԾ): Այն հստակեցնում է եռամյա ժամանակահատվածում համայնքի ծախսային քաղաքականությունը տարեկան կտրվածքով՝ հնարավորություն ընձեռնելով համայնքի համար միջնաժամկետ հատվածում կառավարելու համայնքի ֆինանսական ռեսուրսները և ստեղծելու պատշաճ ծրագրային հիմքեր առաջիկա տարվա համայնքի բյուջեի նախագծի մշակման համար: Այսինքն՝ համայնքի տարեկան բյուջեի նախագծի կազմման գործընթացն առաջնորդվելու է արդեն իսկ կազմված համայնքի ՄԺԾԾ-ով՝ առաջիկա տարվա համար հաստատված հաշվարկներով և հիմնավորումներով: Եվ հենց դրանով է պայմանավորված այն հանգամանքը, որ համայնքի ՄԺԾԾ նախագծի մշակումը նույնպես, ինչպես և տարեկան բյուջեի նախագծի մշակումը, համայնքի բյուջետային գործընթացի լիիրավ փուլ է համարվում:

Համայնքի եռամյա միջնաժամկետ ծախսերի ծրագրավորման փուլի ներմուծմամբ համայնքի համար հնարավորություն է ընձեռնվում անցնել եռամյա ֆինանսական ծրագրավորմանը և տեսնել համայնքի բյուջեի մշակման փուլին բնորոշ մեկ տարվա տեսադաշտից ավելի հեռու՝ երեք տարվա հորիզոնով: Այդ ժամանակահատվածում համայնքի համար ֆինանսական ռեսուրսների հասանելիության, ինչպես նաև այլ գործոնների ազդեցության կանխատեսումները հնարավորություն կընձեռնեն համայնքին մի կողմից՝ մեծացնել համայնքի ֆինանսական ծրագրերի կանխատեսելիությունը, ծրագրերի շարունակականության ապահովման ֆինանսական մեխանիզմների

հստակեցումը, իսկ մյուս կողմից՝ բարձրացնել համայնքներում բյուջետային կարգապահությունը և հաշվետվողականությունը: Առաջիկա երեք տարվա՝ տեղական ինքնակառավարման մարմինների ՄԺԾՄ մշակման նպատակն է հնարավորություն ստեղծել համայնքների համար կառավարելու ֆինանսական ռեսուրսներն իր միջնաժամկետ հարկաբյուջետային նպատակներին և քաղաքականության գերակայություններին համապատասխան:

Ամասիա համայնքի բյուջեի ՄԺԾՄ ոլորտային գերակայությունները

Գերակայությունները որոշվում են ինչպես համայնքի զարգացման հնգամյա ծրագրերի գերակայությունների, այնպես էլ յուրաքանչյուր տարվա համայնքի բյուջեով: Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրերի առաջնահերթ ուղղությունները և հաշվի առնելով համայնքի խնդիրները, համայնքը իր առջև դրել է հետևյալ գերակայությունները՝

1. Բարելավել համայնքի ֆինանսական վիճակը՝ ճշգրտելով անշարժ գույքի հարկի բազաները, բարձրացնելով սեփական եկամուտների հավաքագրման մակարդակը և նպատակային օգտագործելով բյուջետային միջոցները:
2. Բարձրացնել ՏԻՄ-երի, համայնքապետարանի աշխատակազմի, համայնքային կազմակերպությունների և բնակիչների հետ աշխատանքի արդյունավետությունը:
3. Իրականացնել համայնքի ֆինանսատնտեսական և հաշվապահական հաշվառման գործունեության արդյունավետ կազմակերպում՝ համադրելով ֆինանսական ծրագրերի (հանրային հատվածի հաշվապահություն, ՀՀ ՖՆ գանձապետարանի ծրագիր) և ամփոփ հաշվեկշիռների հրապարակայնություն ՀԿՏՀ-ում:
4. Բարձրացնել բնակչությանը և տնտեսվարող սուբյեկտներին մատուցվող համայնքային ծառայությունների և այլ լրացուցիչ ծառայությունների մակարդակն ու որակը:
5. Իրականացնել կրթության, մշակույթի և սպորտի բնագավառների համայնքային ենթակառուցվածքների պահպանման, շահագործման, նորոգման, գույքային վերազինման և այլ աշխատանքներ:
6. Աջակցություն ցուցաբերել և իրականացնել միջոցառումներ համայնքի բնակչության՝ խոցելի խմբերին, բազմազավակ ընտանիքներին, հաշմանդամներին ֆինանսական կամ նյութական օգնություն տրամադրելու գործում:
7. Կապիտալ ներդրումներ կատարել համայնքի բնակարանային, կոմունալ տնտեսության բարեկարգման, ճանապարհային տնտեսության բնագավառներում, ավելացնել փողոցային լուսավորությունը, առկա լուսավորության համակարգը փոխարինելով էներգախնայող լուսատուներով:
8. Խթանել համայնքում գենդերային, հաշմանդամության և խոցելի խմբերի համար ծրագրերի իրականացումը:

9. Իրականացնել օրենքով համայնքի ղեկավարին վերապահված լիազորություններ՝ պաշտպանության և արտակարգ իրավիճակների պայմաններում գործողություններ իրականացնելու ոլորտում:

Համայնքի զարգացման հիմնական ուղղությունները միտված են բնակչության կենսական մակարդակի բարելավմանը, շրջակա միջավայրի պահպանմանը, համայնքում հարմարավետ ու բարեկեցիկ միջավայրի ստեղծմանը, համայնքային ենթակառուցվածքների արդիականացմանն ու զարգացմանը, ինչպես նաև համայնքում գենդերային հավասարությանը:

Համայնքը կարևորում է համայնքային ենթակայության մշակույթի և սպորտի բնագավառների՝ մշակույթի տների, գրադարանների, երաժշտական դպրոցների աշխատողների աշխատավարձերի բարձրացումը, շարունակվում են համայնքային ենթակայության հուշարձանների վերականգնման և պահպանման աշխատանքները: Համայնքային կառավարման ոլորտում իրականացվում են համայնքային ծառայության կատարելագործման, տեխնիկական վերազինմանն ուղղված միջոցառումները, ինչպես նաև համայնքային ծառայողների անձնակազմի կարողությունների զարգացումը: Տնտեսության ոլորտում շարունակվում են ներդրումները ճանապարհային տրանսպորտի, առևտրի և տնտեսական զարգացման, քաղաքաշինության, անշարժ գույքի կադաստրի, գյուղատնտեսության և ջրային տնտեսության, էներգետիկայի և բնապահպանության ոլորտներում (համապատասխան ծրագրերի առկայության պայմաններում): Բնապահպանության բնագավառում կարևորվում են աղբահանության և սանիտարական մաքրման, այդ թվում՝ անօրինական աղբանոցների վերացման, ինչպես նաև թափոնների կառավարման գործընթացների և միջոցառումների ու ենթածրագրերի, տարածքների կանաչապատման, բնապահպանական այլ միջոցառումների իրականացումը:

Տրանսպորտի և կապի բնագավառում իրականացվելիք ծախսային քաղաքականության հիմնական գերակայություններն են ներհամայնքային ճանապարհների հիմնանորոգումը և լուսավորությունը:

Տնտեսական զարգացման բնագավառի հիմնական գերակա ուղղությունն է գյուղատնտեսության, տեղական զբոսաշրջության զարգացման, արևային էներգիայով աշխատող օբյեկտների կառուցման միջոցառումների իրականացումը:

Քաղաքաշինության բնագավառի հիմնական ուղղություններն ու ծախսային գերակայություններն են՝ համայնքների բարեկարգման, բազմաբնակարան շենքերի սպասարկման միջոցառումների իրականացումը:

Բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածներով ծախսերը և դրանց գծով հաշվարկները ներկայացնելիս առաջնորդվել ենք Հայաստանի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի 2007 թվականի հունվարի 9-ի «Հայաստանի Հանրապետության բյուջետային ու հանրային հատվածի հաշվապահական հաշվառման դասակարգումները և դրանց կիրառման ցուցումները հաստատելու մասին» N 5-Ն հրամանով, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի

2008 թվականի օգոստոսի 15-ի «Հայաստանի Հանրապետության համայնքի բյուջեի օրինակելի ձևը և նշված ձևի առանձին հատվածների լրացման մասին ցուցումները հաստատելու, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի 2004 թվականի մարտի 5-ի N 194-Ն հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 730 հրամանով: Ծախսերը տնտեսագիտական դասակարգմամբ հաշվարկել ենք «Դաս-Կատեգորիա-Խումբ» սինթետիկ մակարդակով: Ծախսերի նախագծում համայնքի ղեկավարի, նրա աշխատակազմի և բյուջետային հիմնարկների աշխատողների աշխատանքի վարձատրության չափերը որոշելիս համայնքի ղեկավարը ղեկավարվում է «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 28-րդ և 34-րդ հոդվածների դրույթներով: Բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման ապրանքների և ծառայությունների ձեռքբերման (գնման) հոդվածներով ծախսերի նախատեսման դեպքում այդ ծախսերի հաշվարկներում ապրանքների և ծառայությունների գները հաշվարկելիս առաջնորդվել ենք հետևյալ մոտեցմամբ՝

- այն դեպքում, երբ տվյալ ծախսի գծով համապատասխան ապրանքի կամ ծառայության ձեռքբերման համար առկա են նախորդ տարիներից շարունակվող (գործող) պայմանագրեր, որոնք տարածվում են ընթացիկ տարվա վրա, ապա այդ ապրանքի կամ ծառայության գինը որոշվում է՝ ելնելով համապատասխան պայմանագրերով սահմանված գներից,
- այն դեպքում, երբ տվյալ հոդվածի գծով համապատասխան ապրանքի կամ ծառայության ձեռքբերման համար գները սահմանվում են համապատասխան կարգավորող մարմինների կողմից, ապա այդ ապրանքի կամ ծառայության գինը որոշվում է՝ ելնելով սահմանված սակագներից,
- այն դեպքում, երբ տվյալ ծախսի գծով համապատասխան ապրանքի կամ ծառայության ձեռքբերման համար առկա չեն ընթացիկ տարվա վրա տարածվող պայմանագրեր, սակայն առկա են համապատասխան (գործող) պայմանագրեր նախորդ տարվա համար, ապա այդ ապրանքի կամ ծառայության գինը որոշվում է՝ ելնելով նախորդ տարվա համապատասխան պայմանագրերով սահմանված գներից,
- այն դեպքում, երբ տվյալ ծախսի գծով համապատասխան ապրանքի կամ ծառայության ձեռքբերման համար չկան գործող պայմանագրեր, ապա այդ ապրանքի կամ ծառայության գինը որոշվում է՝ ելնելով ընթացիկ տարվան նախորդող տարվա համապատասխան փաստացի գներից,
- այն դեպքում, երբ տվյալ ծախսի գծով համապատասխան ապրանքի կամ ծառայության ձեռքբերման համար գործող պայմանագրերի, սահմանված սակագների և ընթացիկ տարվան նախորդող տարվա համապատասխան փաստացի գների վերաբերյալ տեղեկատվությունը բացակայում է, այդ ապրանքի կամ ծառայության գինը որոշվում է՝

ելնելով վերջինիս վերաբերյալ ՀՀ պաշտոնական վիճակագրության կամ այլ աղբյուրների հրապարակումներում առկա տեղեկատվությունից:

• **Գյուղատնտեսության բնագավառում**

- Իրականացնել ոռոգման ցանցերի կառուցման և արդիականացման աշխատանքներ՝ համայնքի մի քանի բնակավայրերում՝ ինչը խթան կհանդիսանա մշակվող ցանքատարածությունների ավելացման, բերքատվության բարձրացման:

-2027, 2028 թթ նախատեսված է կառուցել տեխնիկայի կայանատեղ՝ համայնքի ունեցած տեխնիկայի շահագործումն ավելի էֆեկտիվ իրականացնելու համար::

• **Տրանսպորտի բնագավառում**

- Շարունակել ներհամայնքային ճանապարհների հարթեցման, փոսալցման աշխատանքները:

- Իրականացնել ճանապարհների ծմեռային սպասարկումը:

• **Քաղաքաշինության բնագավառում**

- Համայնքի բոլոր բնակավայրերում իրականացնել լուսավորության ներքին ցանցի ընդլայնման աշխատանքներ, արդիականացնել լուսավորության համակարգը՝ ժամանակակից էներգոխնայող լուսատուներով:

- Իրականացնել բազմաբնակարան շենքերի, շքամուտքերի տանիքների վերանորոգման աշխատանքներ:

• **Շրջակա միջավայրի պաշտպանության բնագավառում**

- Ձեռք բերել աղբամաններ՝ համայնքի բոլոր 26 բնակավայրերում աղբահանություն իրականացնելու նպատակով՝ ներկայիս 10 բնակավայրի փոխարեն:

- Իրականացնել աղբավայրի ցանկապատում՝ կուտակված աղբի տարածումը և բնության աղտոտումը կանխելու նպատակով::

• **Սոցիալ-մշակութային ոլորտներում**

-Ապահովել նորաստեղծ «Ամասիայի սոցիալ-կրթական կենտրոն» ՀՈԱԿ-ի գործունեությունը, որը թույլ կտա իրականացնել համայնքի երեխաների արտադպրոցական դաստիարակությունը, ունենալ տարբեր խմբակներ՝ ինչպես երեխաների, այնպես էլ ծերերի համար, իրականացնել սոցիալական ոլորտում համայնքի պարտադիր լիազորությունները:

-Բոլոր բնակավայրերում իրականացնել սպորտային հրապարակների կառուցման և կահավորման աշխատանքներ, ձեռք բերել սպորտային գույք:

-Աջակցել համայնքի ակտիվ երիտասարդների կողմից իրականացվող տարբեր մշակութային, ժամանցային, մարզական ծրագրերի իրականացմանը:

-2028թ-ին նախատեսված է սկսել Գտաշենի մշակույթի տոտան վերանորոգման աշխատանքները

-Սոցիալական ապահովության բնագավառում շարունակել առանձնակի ուշադրության կենտրոնում պահել անապահով ընտանիքներին, առանց ծնողական խնամքի մնացած երեխաների սոցիալական պաշտպանվածության խնդիրներին:

ՄԱՍ 1. Ամասիա համայնքի բյուջեի եկամուտները

2026-2028 թվականների Ամասիա համայնքի միջնաժամկետ ծախսային ծրագրում առաջիկա երեք տարիների համար համայնքի եկամուտները պլանավորելիս հիմք է հանդիսացել օրենքով սահմանված և նախորդ երեք տարիներին հավաքագրված միջին ցուցանիշները: Բացառություն է կազմել գույքի վարձակալությունից ստացվող եկամուտները, որը պլանավորելիս հաշվի է առնվել համայնքի պոտենցիալը, այսինքն հաշվի է առնվել այն հանգամանքը, որ համայնքում առկա են հողատարածքներ, որոնք 2025թ-ի դրությամբ վարձակալված չեն, սակայն հաշվի առնելով, որ համայնքը միջոցներ է ներդնում հողերի ջրարբիացման, գյուղտեխնիկայի շահագործման արդյունավետության բարձրացման ուղղությամբ, ուստի իրատեսական է դառնում գույքի վարձակալության գծով եկամուտների անընդհատ աճը:

Ամասիա համայնքի եկամուտների գոյացման աղբյուրները բաժանվում են երկու խմբի՝ սեփական եկամուտներ և պաշտոնական դրամաշնորհներ:

Վարչական բյուջեի հարկային եկամուտներում ամենախոշոր մասը բաժին է ընկել փոխադրամիջոցների գույքահարկին՝ 38000,0 հազ. դրամ:

Մնացած եկամուտների պատկերը հետևյալն է.

- անշարժ գույքի հարկ- 35000,0 հազ.դրամ,
- տեղական տուրքեր- 1205,6 հազ. դրամ,
- վարչական գանձումներ- 2026, 2027, և 2028 թթ-ի համար համապատասխանաբար՝ 8620,0, 8920,0 և 8920,0 հազ.դրամ,
- վարձակալական վճար- 2026, 2027, և 2028 թթ-ի համար համապատասխանաբար՝ 32670,0, 32840,0 և 33840,0 հազ.դրամ:

Ֆոնդային բյուջեի եկամուտները գոյացել են վարչական բյուջեի պահուստային ֆոնդից ֆոնդային բյուջե կատարվող մասհանումների (2026, 2027, և 2028 թթ-ի համար համապատասխանաբար 232690,3, 197110,4 և 165922,9 հազ.դրամ) և պետական բյուջեից ստացված սուբվենցիաների (2026, 2027, և 2028 թթ-ի համար համապատասխանաբար 60000,0, 66252,5 և 75858,0 հազ.դրամ) հաշվին:

Ամասիայի համայնքապետարանի 2026-2028 թվականների ՄԺԾԾ-ի կազմման հիքում ընկած է ինչպես նախորդ տարիների բյուջեի մուտքերի վերլուծությունը, այնպես էլ տարբեր նորմատիվ իրավական ակտերով սահմանված համայնքի բյուջեին ամրագրված եկամուտների դրույքաչափերը և դրանցում կատարված փոփոխությունները:

Անշարժ գույքի հարկը պլանավորելիս կիրառվել է այն մոտեցումը, որ նախորդ տարիների պարտքերը ի վերջո պետք է նվազեցվի և պլանավորվել է յուրաքանչյուր տարի 15-17 տոկոս պարտքի մարում:

- **Փոխադրամիջոցների գույքահարկի մասով.**

Այս հարկատեսակի գծով եկամուտների պլանավորման ժամանակ հաշվի է առնվել համալսարանի համակարգչային բազանում գրանցված փոխադրամիջոցների գծով ՀՀ հարկային օրենսգրքով սահմանված կարգով և դրույքաչափերով հաշվարկված հարկի գումարները, ինչպես նաև կուտակված ապառքների գումարները և դրանց գանձման դինամիկան:

- **Պետական տուրքեր՝**

Ամասիա համայնքի բյուջե են մուտքագրվում օրենքով ամրագրված հետևյալ պետական տուրքերից մուտքերը.

1. քաղաքացիական կացության ակտեր գրանցելու, դրանց մասին քաղաքացիներին կրկնակի վկայականներ, քաղաքացիական կացության ակտերում կատարված գրառումներում փոփոխությունների, լրացումների, ուղղումների և վերականգնման վկայականներ տալու համար պետական տուրքերը,

- **Տեղական տուրքեր և վճարներ՝**

Տեղական տուրքերի գծով համայնքի բյուջեի եկամուտների հաշվարկման համար կարևոր է բազայի գնահատումը, քանի որ տեղական տուրքերը և դրանց դրույքաչափերը սահմանվում են համայնքի տարեկան բյուջեի հաստատումից առաջ: Դրույքաչափերի հաստատումից հետո տեղական տուրքերի կանխատեսումը կհանգի միայն տարվա ընթացքում տվյալ տեղական տուրքի քանակի (բազայի) կանխատեսմանը: Նույն մոտեցմամբ իրականացվում է նաև տեղական վճարներից համայնքի բյուջեի մուտքերի կանխատեսումը: Ամասիա համայնքում տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը սահմանելիս ավագանին առաջնորդվել է գոտիավորման սկզբունքով, գոտի համարելով համայնքի կազմում առկա յուրաքանչյուր բնակավայրը:

- **Այլ եկամուտներ՝**

Ամասիա համայնքի այլ եկամուտներն են համայնքի և համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների կողմից պայմանագրերին համապատասխան գանձվող վճարները՝ համայնքի սեփականությունը հանդիսացող գույքի վարձակալության կամ կառուցապատման իրավունքի դիմաց գանձվող վարձավճարները, որոնց հաշվարկման ժամանակ անհրաժեշտ է հիմք ընդունել նախորդ տարիների համար կնքված պայմանագրերի ցուցանիշները: Վարձակալության հանձնվող հողերի վարձակալական վճարները չպետք է պակաս լինեն այդ հողերի համար հաշվարկվող անշարժ գույքի հարկի մեծությունից:

- **Պաշտոնական դրամաշնորհներ՝**

Ամասիա համայնքի եկամուտների մեջ ինչպես նախորդ, այնպես էլ առաջիկա երեք տարիներին գերակշիռ մաս են կազմում պաշտոնական դրամաշնորհները:՝ 2025թ-ին

բյուջեի 77,5%, առաջիկա երեք տարիներին նախատեսված է համապատասխանաբար՝ 83,9%, 88.6%, 80,681,9 %:

ՄԱՍ 2. Ամասիա համայնքի բյուջեի ծախսերը

Համայնքի բյուջեի ծախսերը պլանավորվել է հաշվի առնելով աշխատավարձի փաստացի հաշվարկը: Ոչ առևտրային կազմակերպություններին բյուջեից հատկացվում է սուբվենցիա՝ իրենց կողմից ներկայացված հաշվարկների հիման վրա:

Կապիտալ ծախսերը պլանավորվել են հաշվի առնվելով 2022-2026 թվականների հնգամյա զարգացման ծրագիրը, իսկ 2027 և 2028 թվականների համար՝ համայնքի հրատապ լուծում պահանջող խնդիրները:

2026- 2028 թվականի կապիտալ ծախսերի մեջ ընդգրկվել են հետևյալ ծրագրերը՝

1. Համայնքային կենտրոնների վերանորոգում:

Բնակավայրերում աշխատանքային պայմանների բարելավման, համայնքապատկան շենքերի երկարակեցության ապահովման նպատակով նախատեսվում է 2026-2028թթ-ին իրականացնել համայնքային կենտրոնների վերանորոգման աշխատանքներ՝ յուրաքանչյուր տարվա համար՝ 17428,2 հազ. դրամ արժեքով:

2. Ամասիա բնակավայրի վարչական շենքի ջեռուցման ցանցի անցկացման համար նախատեսված է 2026թ-ին 3,500.0 հազար դրամ: Նախատեսված է իրականացնել համայնքի բյուջեի հաշվին:

3. Ամասիա համայնքի բոլոր բնակավայրերի համայնքային կենտրոնների գույքային հագեցվածության ապահովում

Ծրագիրը իրականացվելու է համայնքի բյուջեի միջոցների հաշվին՝ յուրաքանչյուր տարի հատկացնելով 2218,0 հազ. դրամ:

4. Տեխնիկայի կայանատեղի կառուցում

Նախատեսված է կառուցել երկու կայանատեղ՝ Ամասիա և Բերդաշեն բնակավայրերում, որոնցից մեկը կկառուցվի 2028թ-ին՝ համայնքի բյուջեի և սուբվենցիոն հատկացումների հաշվին՝ ծրագրի արժեքն է 45000.0 հազ. դրամ:

5. Աղբավայրի ցանկապատում

Կուտակվող աղբի տարածումը, բնության աղտոտումը կանխելու համար անհրաժեշտություն կա համայնքի աղբավայրը ցանկապատել, որի համար 2027թ-ին նախատեսված է 15,000.0 հազ. դրամ, համայնքի բյուջեից:

7. Ջրամատակարարում

Ոռոգման և խմելու ջրագծերի վերանորոգման, կառուցման համար 2026-2028 թթ-ի նախատեսված է համապատասխանաբար՝ 30000,0, 26724,0, 26724,0 հազար դրամ:

8. Ամասիա համայնքի բազմաբնակարան շենքերի տանիքների վերանորոգում

2026-2028թթ-ին պետք է իրականացվի բազմաբնակարան շենքերի տանիքների վերանորոգման աշխատանքներ 48432,0 հազ դրամ ընդհանուր արժեքով, մեկ շենքի վերանորոգման արժեքը՝ 24216,0 հազ. դրամ: Նախատեսված է իրականացնել համայնքի բյուջեի և սուբվենցիոն միջոցների հաշվին:

9. Արտաքին լուսավորության ցանցի ընդլայնում:

Սուբվենցիոն ծրագրերով նախատեսված է 2026-2028 թթ իրականացնել լուսավորության ցանցի ընդլայնման աշխատանքներ համայնքի բոլոր բնակավայրերում, 2026թ-ին՝ 24707.1 հազ. դրամ, 2027թ-ին՝ 22200.0 հազ. դրամ և 2028թ-ին՝ 21940.0 հազ. դրամ գումարով:

10. Գտաշենի մշակույթի տան վերանորոգում:



Նախատեսված է 2028թ-ին հատկացնել 40000,0 հազ : Իրականացվելու է համայնքի բյուջեի և սուբվենցիոն միջոցների հաշվին:

Ամասիա համայնքի 2026-2028 թվականների ծախսերի պլանավորման հիմքում, դրված են այն հիմնախնդիրները, որոնց լուծման առաջնահերթությունները ամրագրված են համայնքի զարգացման տեսլականում: Այդ նպատակով նախատեսվում են կատարել կապիտալ ծախսեր հետևյալ ուղղություններով.

- Գյուղատնտեսության բնագավառ

Քանի որ Ամասիա համայնքը կազմված է միայն գյուղական բնակավայրերից, համայնքի բնակչության հիմնական զբաղմունքը գյուղատնտեսությունն է, որի զարգացումից է հիմնականում կախված բնակչության կենսամակարդակի բարելավումը:

Այդ նպատակին հասնելու համար նախորդ տարիների ընթացքում ձեռք են բերվել տարբեր գյուղատնտեսական տեխնիկա և գյուղատնտեսական գործիքներ, որոնցով վճարովի ծառայություններ են մատուցվում ինչպես համայնքի, այնպես էլ հարակից բնակավայրերի հողօգտագործողներին: Բոլոր բնակավայրերում տեղադրվել են հակակարկտային կայաններ, որոնց գոյությունը որոշ չափով մեղմացրել է գյուղատնտեսության արդյունքների կախվածությունը եղանակային պայմաններից՝ ավելի գրավիչ և կանխատեսելի դարձնելով գյուղատնտեսությամբ զբաղվելը: Այս ամենի շնորհիվ համայնքում մի քանի անգամով ավելացել է մշակվող վարելահողերի քանակը:

Այժմ համայնքում գյուղատնտեսության զարգացման առաջնահերթ խնդիրը դարձել է հողատարածքների ոռոգման հարցը: Վերջին տարիներին կլիմայական պայմանների փոփոխության պատճառով ոռոգման ներքին ցանցերի կառուցումն և արդիականացման հարցերը դարձել են օրակարգի կարևորագույն խնդիրները:

Քաղաքաշինության բնագավառ

Ամասիա համայնքի զարգացման գերակայություններից է նաև ներհամայնքային ճանապարհների կառուցումը և գիշերային լուսավորության ցանցի ընդլայնումը: Այդ նպատակով նախորդ տարիներին բոլոր բնակավայրերում սուբվենցիոն ծրագրերի միջոցով կատարվել են ներհամայնքային ճանապարհների ասֆալտապատման աշխատանքներ: Սուբվենցիոն ծրագրերով կատարվել են նաև լուսավորության ցանցի ընդլայնման աշխատանքներ:

Ստորև ներկայացվում է 2026-2028 թվականների համար նախատեսված վարչական ծախսերը՝ 2025թ. հաստատված և 2026թ. կանխատեսված բյուջեների ցուցանիշների համեմատական վերլուծությամբ (Աղյուսակ 2):

Աղյուսակ 2

Մուտքի անվանումը	2024թ. փաստ	2025թ. հաստ	2026 թ. կանխ.	2027թ. կանխ.	2028 թ. կանխ.	2026թ կանխ. և 2025թ. հաստ. բյուջեի տարբերություն	
						զումար	տոկոս
ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ	621809.0	709691,6	795112.1	808451.2	610547.1	85420.5	112.0
Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ	237005.4	315548,7	173429.0	169929.0	173429.0	-142120	55.0
Հասարակական կարգ և անվտանգություն	271.0	12600,0	10000.0	10000.0	10000.0	-2600	79.4
Տնտեսական հարաբերություններ	119047.2	116138,4	214868.0	225686.8	43232.8	98729.6	185.0
Շրջակա միջավայրի պաշտպանություն	6732.3	10757,0	26217.0	10757.0	10297.0	15460	243.7

Բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայություն	92267.5	108999.2	124299.2	113501.8	119156.1	15300	114.0
Առողջապահություն		1500,0				-1500	0.0
Հանգիստ, մշակույթ և կրոն	116441.0	61578.5	59700.0	61100.0	101.100.0	-17848.7	71.0
Կրթություն	38012.0	43729.8	43729.8	43729.8	43729.8	0	100.0
Սոցիալական պաշտպանություն	12032.5	14220.0	14100.0	10600.0	10600.0	-120	99.2
Հիմնական բաժիններին չդասվող պահուստային ֆոնդեր		65435.7	97748.4	89879.3	93839.7	32312.7	149.4

Ինչպես երևում է Աղյուսակ 2-ի տվյալներից՝ 2025թ. հաստատված բյուջեի համեմատությամբ 2026թ. համար կանխատեսված բյուջեն գերազանցել են 2025թ. ցուցանիշներին 85420,5 հազար դրամով, կամ 112 տոկոսով:

ՀՀ Շիրակի մարզի Ամասիա համայնքի միջնաժամկետ ծախսերի ծրագրի 2026-2028թթ. վարչական և ֆոնդային մասերի եկամուտները՝ ըստ ձևավորման աղբյուրների

(հազար դրամներով)

Տողի NN	Եկամտատեսակները	ողվածի N	2024 փաստացի			2025 հաստատված			2026 թվական			2026թ կանխատեսված և 2025թ. հաստատված բյուջեի տարբերություն			2027 թվական			2028 թվական			Ծանոթություն
			Ընդամենը	այդ թվում՝		Ընդամենը	այդ թվում՝		Ընդամենը	այդ թվում՝		Ընդամենը	այդ թվում՝		Ընդամենը	այդ թվում՝		Ընդամենը	այդ թվում՝		2026թ կանխատեսված և 2025թ. հաստատված բյուջեի
				վարչական բյուջե	ֆոնդային բյուջե		վարչական բյուջե	ֆոնդային բյուջե		վարչական բյուջե	ֆոնդային բյուջե		վարչական բյուջե	ֆոնդային բյուջե		վարչական բյուջե	ֆոնդային բյուջե		վարչական բյուջե	ֆոնդային բյուջե	
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17	18	19	20	21	22
1000	ԸՆԴԱՄԵՆԸ ԵՎԱՄԱՌՆՏԵՐ (տող 1100 + տող 1200+տող 1300)		675554.7	596366.3	126270.6	593164.8	568533.6	65630	795,112.1	562421.8	292690.3	201,947.3	(6,111.8)	227,060.4	808451.9	565591.5	309112.9	733264.8	566591.9	242530.9	
	այդ թվում՝																				
1100	1. ՀԱՐԿԵՐ ԵՎ ՏՈՒՐՔԵՐ (տող 1110 + տող 1120 + տող 1130 +տող1140+ տող 1150) , այդ թվում՝	7100	65771.1	65771.1	0	79453.4	79453.4	0	77455.6	77455.6	0	(1,997.8)	(1,997.8)	0.0	80155.34	80155.34	0	80155.74	80155.74	0	
	այդ թվում՝																				
1110	1.1 Գույքային հարկեր անշարժ գույքից (տող 1111 + տող 1112+տող1113), այդ թվում՝	7131	34193.7	34193.7	0	39950.6	39950.6	0	37800	37800	0	(2,150.6)	(2,150.6)	0.0	40499.74	40499.74	0	40500.14	40500.14	0	
	այդ թվում՝																				
1111	Գույքահարկ համայնքների վարչական տարածքներում գտնվող շենքերի և շինությունների համար		195.4	195.4		0	0		0			0.0	0.0	0.0	0			0			
1112	Հողի հարկ համայնքների վարչական տարածքներում գտնվող հողի համար		4752.1	4752.1		5000	5000		2800	2800		(2,200.0)	(2,200.0)	0.0	5500	5500		5500	5500		
1113	Համայնքի բյուջե մուտքագրվող անշարժ գույքի հարկ		29246.2	29246.2	0	34950.6	34950.6	0	35000	35,000.0		49.4	49.4	0.0	34999.74	34,999.7		35000.14	35,000.1		ՀՀ-ի 2026թ կանխատեսված և 2025թ. հաստատված բյուջեի տարբերություն
1120	1.2 Գույքային հարկեր այլ գույքից	7136	28838.5	28838.5	0	37847.2	37847.2	0	38000	38000	0	152.8	152.8	0.0	38000	38000	0	38000	38000	0	
	այդ թվում՝																				
1121	Գույքահարկ փոխադրամիջոցների համար		28838.5	28838.5		37847.2	37847.2		38000	38000		152.8	152.8	0.0	38000	38,000.0		38000	38,000.0		
1130	1.3 Տեղական տուրքեր (տող 11301 + տող 11302 + տող 11303 + տող 11304 + տող 11305 + տող 11306 + տող 11307 + տող 11308 + տող 11309 + տող 11310 + տող 11311+տող 11312+ տող 11313 + տող 11314+տող 11315+ տող 11316 + տող 11317+ տող 11318 + տող 11319) , այդ թվում՝	7145	2432.9	2432.9	0	1205.6	1205.6	0	1205.6	1205.6	0	0.0	0.0	0.0	1205.6	1205.6	0	1205.6	1205.6	0	
	այդ թվում՝																				
11301	Համայնքի վարչական տարածքում նոր շենքերի, շինությունների և ոչ հիմնական շինությունների շինարարության (սեփական, օրենսդրական համաձայնությամբ) ծախսեր		12			0			0			0.0	0.0	0.0	0			0			
11302	Համայնքի վարչական տարածքում գոյություն ունեցող շենքերի և շինությունների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման և բարելավման		1195			125			125			0.0	0.0	0.0	125			125			
11303	Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների և քաղաքաշինական այլ օբյեկտների		0			0			0			0.0	0.0	0.0	0			0			
11304	Համայնքի վարչ. տարածքում, սահմանամերձ բարձրլեռն. համայնքի վարչ. տարածքում, բացառ. միջպետ. և համրապետ. նշանակ. ավտոմոբիլ. ճանապարհի կողքերում, խանութում և կրպակներում հեռուկ վաճառքի		200			200			200			0.0	0.0	0.0	200			200			

11305	Համայնքի վարչական տարածքում, սահմանամերձ և քարծղեղնային համայնքների վարչական տարածքում գտնվող մանրածախ առևտրի կետերում կամ ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության	0		0	0		0		0.0	0.0	0.0	0		0						
11306	Համայնքի վարչական տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի՝ որոշակի վայրում մանրածախ առք ու վաճառք	0		0	0		0		0.0	0.0	0.0	0		0						
11307	Համայնքի վարչական տարածքում ոգելից և ալկոհոլային խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար	334	334	454	454		454	454	0.0	0.0	0.0	454		454		454				
11308	Իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին համայնքի վարչական տարածքում «Առևտրի և ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով	0		0	0		0		0.0	0.0	0.0	0		0						
11309	Համայնքի վարչական տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակահաղերի կազմակերպման օբյեկտներին, խաղատներին և բաղնիքներին	0		0	0		0		0.0	0.0	0.0	0		0						
11310	Համայնքի վարչական տարածքում համայնքային կանոններին համապատասխան հանրային սննդի	0		0	0		0		0.0	0.0	0.0	0		0						
11311	Քաղաքային բնակավայրերում ավագանու որոշմամբ, սահմանված կարգին համապատասխան, տնային	0		0	0		0		0.0	0.0	0.0	0		0						
11312	Ավագանու սահմանվ. կարգին ու պայման-ին համ.: համայնքի վարչ. տարածքում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվ. համար, բացառ. միջպետ. ու հանրապետ. նշանակ. ավտոմոբիլ. ճանապարհի-ի օտարման	607.9	607.9	426.6	426.6		426.6	426.6	0.0	0.0	0.0	426.6		426.6		426.6				
11313	Հայաստանի Հանրապետության վարչատարածքային միավորների խորհրդանիշերը (զինանշան, անվանում և այլն), որպես օրենքով զրանցված ապրանքային նշան, ապրանքների արտադրության, աշխատանքների	0		0	0		0		0.0	0.0	0.0	0		0						
11314	Համայնքի վարչական տարածքում մարդատար տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների միկրոավտոբուսների) ծառայություն	0		0	0		0		0.0	0.0	0.0	0		0						
11315	Համայնքի վարչական տարածքում քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության ծառայությունների իրականացման և (կամ) մատուցման ծառայության համար	0		0	0		0		0.0	0.0	0.0	0		0						
11316	Համայնքի վարչական տարածքում մասնավոր գեղեզմանատան կազմակերպման և շահագործման	0		0	0		0		0.0	0.0	0.0	0		0						
11317	Համայնքի վարչական տարածքում տեխնիկական և հատուկ նշանակության իրավաբանություն իրականացնելու	0		0	0		0		0.0	0.0	0.0	0		0						
11318	Համայնքի տարածքում սահմանափակման ենթակա ծառայության օբյեկտի գործունեության	0		0	0		0		0.0	0.0	0.0	0		0						
11319	Այլ տեղական տուրքեր	84	84	0	0		0		0.0	0.0	0.0	0		0						
1140	1.4 Համայնքի բյուջե վճարվող պետական տուրքեր (տող 1141 + տող 1142), այդ թվում՝	7146	306	306	0	450	450	0	450	450	0	0.0	0.0	0.0	450	450	0	450	450	0
	այդ թվում՝																			
1141	Քաղաքացիական կացության ակտեր գրանցելու, դրանց մասին քաղաքացիներին կրկնակի վկայականներ, քաղաքացիական կացության ակտերում կատարված գրառումներում փոփոխություններ, տպագրման, ուղղումների կատարելու և	306	306	450	450		450	450				0.0	0.0	0.0	450	450		450	450	

[illegible]

[illegible]

1251	Պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաներ		377329.8	377329.8		434945.8		434616.3	434616.3		(329.5)	(329.5)	0.0	434616.3	434616.3		434616.3				Հաշվի արևված
1252	Պետական բյուջեից տրամադրվող այլ դոտացիաներ (տող 1253 + տող 1254) այդ թվում՝		0	0	0	0	0	0	0	0	0.0	0.0	0.0	0	0	0	0	0	0		
1253	Համայնքի բյուջեի եկամուտները եկազեցնող՝ ՀՀ օրենքների կիրարկման արդյունքում համայնքի բյուջեի եկամուտների կորուստների պետության		0		0		0		0		0.0	0.0	0.0	0		0					
1254	Այլ դոտացիաներ		0		0		0		0		0.0	0.0	0.0	0		0					
1255	Պետական բյուջեից տրամադրվող նպատակային հատկացումներ (ստանդարտներ)		0		0		0		0		0.0	0.0	0.0	0		0					
1256	ՀՀ այլ համայնքների բյուջեներից ընթացիկ ծախսերի ֆինանսավորման նպատակով ստացվող պաշտոնական դրամաշնորհներ		0		0		0		0		0.0	0.0	0.0	0		0					
1260	2.6 Կապիտալ ներքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացված կառավարման այլ մակարդակներից (տող 1261 + տող 1262), այդ թվում՝	7332	69680.3	0	69680.3	24631.2	0	24631	232690.3	0	232690.3	208,059.1	0.0	208,059.1	242110.4	0	242110.4	165922.9	0	165922.9	
	այդ թվում՝																				
1261	Պետական բյուջեից կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակային հատկացումներ (սուբվենցիաներ)		69680.3		69680.3	24631.2		24631	232690.3		232690.3	208,059.1	0.0	208,059.1	242110.4		242110.4	165922.9		165922.9	Հաշվի է արևվել 2026թ-ի սուբվենցիոն ծախսերի
1262	ՀՀ այլ համայնքներից կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակով ստացվող պաշտոնական		0		0		0		0		0	0.0	0.0	0.0	0		0				
1300	3. ԱՅԼ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ (տող 1310 + տող 1320 + տող 1340 + տող 1350 + տող 1360 + տող 1370 + տող 1380 + տող 1390), այդ թվում՝	7400	162773.5	153265.4	56590.3	95133.1	54134.4	40999	110349.9	50349.9	60000	15,216.8	(3,784.5)	19,001.3	117822.4	50819.9	67002.5	128427.9	51819.9	76608	
	այդ թվում՝																				
1310	3.1 Տոկոսներ այդ թվում՝		0	0	0	0	0	0	0	0	0	0.0	0.0	0.0	0	0	0	0	0	0	
1311	Օրենքով մայմամուսուկ, դեպքերում բանկ, համայնքի բյուջեի ժամ, ազատ միջոց-ի տեղաբաշխ-ից և դեպոզիտ-ից											0.0	0.0	0.0							
1320	3.2 Հախարածիմներ, այդ թվում՝	7412	0	0	0	0	0	0	0	0	0	0.0	0.0	0.0	0	0	0	0	0	0	
	այդ թվում՝																				
1321	Բաժնետիրական ընկերություններում համայնքի մասնակցության դիմաց համայնքի բյուջե կատարվող մասնաճանձններ (ստանդարտներ)		0		0		0		0		0	0.0	0.0	0.0	0		0				
1330	3.3 Գույքի վարձակալությունից եկամուտներ (տող 1331 + տող 1332 + տող 1333 + տող 1334), այդ թվում՝	7415	40129.1	40129.1	0	34940	34940	0	32670	32670	0	(2,270.0)	(2,270.0)	0.0	32840	32840	0	33840	33840	0	
	այդ թվում՝																				
1331	Համայնքի սեփականություն համարվող հողերի վարձավճարներ		33377.1	33377.1		0		0	0		0	0.0	0.0	0.0	0		0		0		
1332	Համայնքի վարչական տարածքում գտնվող պետական սեփականության համարվող հողերի վարձակալության		6042	6042		34100		31830				(2,270.0)	(2,270.0)	0.0	32000	32000		33000	33000		սպառող է նախկին նոր պայմանագրի թիվներով
1333	Համայնքի վարչական տարածքում գտնվող պետության և համայնքի սեփականությանը պատկանող հողամասերի կառուցապատման ծախսերի հիմնա ժամկետ		0		0		0		0			0.0	0.0	0.0	0		0				
1334	Այլ գույքի վարձակալությունից մուտքեր		710	710		840	840		840	840		0.0	0.0	0.0	840	840		840	840		

1340	3.4 Համայնքի քյուլջեի եկամուտներ ապրանքների մատակարարումից և ծառայությունների մատուցումից (տող 1341 + տող 1342+ տող 1343), այդ թվում՝ այդ թվում՝	7421	8528.8	8528.8	0	9059	9059	0	9059.9	9059.9	0	0.9	0.9	0.0	9059.9	9059.9	0	9059.9	9059.9	0	
1341	Համայնքի սեփ. հանդ, այդ թվ. տիրազուրկ, համայնքին ռաբես սեփ. անց.ապրանք-ի (բաց. հիմն. միջոց, ոչ նյութ. կամ բարձրարժեք ակտիվ հանդիս., ինչպես նաև համայնքի		0		0			0				0.0	0.0	0.0	0		0				
1342	Պետության կողմից տեղական ինքնակառավարման մարմիններին պատվիրակված լիազորությունների իրականացման ծախսերի հիմնականում չհամար.սեփական		1999.9	1999.9	1999	1999		1999.9	1999.9		0.9	0.9	0.0	1999.9	1999.9		1999.9	1999.9			
1343	Օրենքով սահմանված դեպքերում համայնքային հիմնարկների կողմից առանց տեղական տուրքի գանձման մատուցվող ծառայությունների կամ կատարվող գործողությունների դիմաց		6528.9	6528.9	7060	7060		7060	7060		0.0	0.0	0.0	7060	7060		7060	7060			
1350	3.5 Վարչական գանձումներ (տող 1351 + տող 1352+տող 1353), այդ թվում՝	7422	7353.4	7353.4	0	8065.6	8065.6	0	8620	8620	0	554.4	554.4	0.0	8920	8920	0	8920	8920	0	
1351	Տեղական վճարներ (տող 13501+տող 13502+տող 13503+տող 13504+տող 13505+տող 13506+տող 13507+տող 13508+տող 13509+տող 13510+տող 13511+տող 13512+տող 13513+տող 13514+տող 13515+տող 13516+տող 13517+տող 13518+տող 13519+տող 13520) - այդ թվում՝ այդ թվում՝		7353.4	7353.4	0	8065.6	8065.6	0	8620	8620	0	554.4	554.4	0.0	8920	8920	0	8920	8920	0	
13501	Համայնքի տարածքում շենքի կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ		0		0			0				0.0	0.0	0.0	0		0				
13502	Ենթար. նախագծ. փաստաթղթ-ով (նախ. շինար. թույլտվ. պահանջ., քույր շինարար. աշխատանք-ն իրական. հետո շենք-ի և շինութ-երի (այդ թվում՝ դրանց վերակառ-ը, վերականգն-ը, ուժեղ-ը, արդիակ-ը, ընդլայն-ն ու բարեկարգ-ը)		0		0			0				0.0	0.0	0.0	0		0				
13503	Ենթարադաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված աշխատանքներն ավարտելուց հետո շահագործման		0		0			0				0.0	0.0	0.0	0		0				
13504	Համայնքի տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում ամրագրված փաստաթղթերի		0		0			0				0.0	0.0	0.0	0		0				
13505	Համայնքի կողմից կազմակերպվող մրցույթների և աճուրդների մասնակցության համար		92	92	0			0				0.0	0.0	0.0	0		0				
13506	Համայնքի վարչական տարածքում տնտեսվաճառներին (վերնխամբերին) մասնակցելու համար		0		0			0				0.0	0.0	0.0	0		0				
13507	Համայնքի կողմից աղբահանության վճար վճարողների համար աղբահանության աշխատանքները կատարելու համար		3059.1	3059.1		3645.6	3645.6		4200	4200		554.4	554.4	0.0	4500	4500		4500	4500		Հարատևելու մ է ընդլայնել աղբահանության
13508	Համայնքի կողմից իրավաբանական անձանց կամ անհատ ձեռնարկատերերին շինարարական և խոշոր եզրաչափի աղբի հավաքման և փոխադրման, ինչպես նաև աղբահանության վճար վճարողներին շինարարական և խոշոր եզրաչափի		0		0			0				0.0	0.0	0.0	0		0				
13509	Կենտրոնացված ջեռուցման համար		0		0			0				0.0	0.0	0.0	0		0				
13510	Ջրմուղ-կոյուղու համար այն համայնքներում, որոնք ներառված չեն ջրմուղ-կոյուղու ծառայություններ մատուցող կազմակերպությունների սպասարկման տարածքներում		0		0			0				0.0	0.0	0.0	0		0				

13511	Ոռոգման ջրի մատակարարման համար այն համայնքներում, որոնք ներառված չեն՝ Զրոգտագործողների ընկերությունների և ջրօգտագործողների ընկերությունների միությունների մասին, ՀՀ օրենքի համաձայն ստեղծված ջրօգտագործողների ընկերությունների		0		0		0		0.0	0.0	0.0	0		0				
13512	Համայնքի կողմից կառավարվող քաղաքականության շենքերի ընդհանուր քաժային սեփականության պահպանման պարտադիր նորմերի	977.3		977.3		900		900		0.0	0.0	0.0	900		900		900	
13513	Համայնքային ենթակառուցվածքային մատակարարողի ծառայությունից օգտվողների համար	3225		3225		3520		3520		0.0	0.0	0.0	3520		3520		3520	
13514	Համայնքային ենթակառուցվածքային արտադրողական դաստիարակության հաստատությունների (երաժշտական, մկաղական և արվեստի դպրոցներ և	0				0		0		0.0	0.0	0.0	0		0			
13515	Համայնքի վարչական տարածքում, սակայն համայնքի բնակավայր-ից դուրս գտնվող՝ ավագանու որոշմամբ հանրային հանգստի վայր սահմ. և համայնքի կողմից կամ համայնքի պատվերով որպես հանրային հանգստի	0				0		0		0.0	0.0	0.0	0		0			
13516	Համայնքային սեփականություն հանդիսացող պատմության և մշակութային անշարժ հուշարժանների և համայնքային ենթակառուցվածքային ծառայությունների մուտքի	0				0		0		0.0	0.0	0.0	0		0			
13517	Համայնք. սեփ. հանդ-ող ընդհանուր օգտագործ. փողոց-ում և հրապարակ-ում (քաղ. բակային տարածք-ի, ուսումն., կրթ., մշակութ. և առողջ. հաստատ-երի, պետ. կառավարման և տեղ. ինքնակառ. մարմին-ի վարչ. շենք-ի հարակից տարածք-ի) ավտոտր. միջոց	0				0		0		0.0	0.0	0.0	0		0			
13518	Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ տրամադրելու համար	0				0		0		0.0	0.0	0.0	0		0			
13519	Համայնքն սպասարկող անասնաբույժի ծառայությունների դիմաց	0				0		0		0.0	0.0	0.0	0		0			
13520	Այլ տեղական վճարներ	0				0		0		0.0	0.0	0.0	0		0			
1352	Համայնքի վարչական տարածքում ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների օրինականացման	0				0		0		0.0	0.0	0.0	0		0			
1353	Համայնքի բյուջե մուտքագրվող այլ վարչական զանձույններ	0				0		0		0.0	0.0	0.0	0		0			
1360	3.6 Մուտքեր տույժերից, տուգանքներից (տող 1361 + տող 1362) այդ թվում՝	7431	0	0	0	0	0	0	0	0	0.0	0.0	0.0	0	0	0	0	0
	այդ թվում՝																	
1361	Վարչական իրավախախտումների համար տեղական ինքնակառավարման մարմինների կողմից պատասխանատվության միջոցների	0				0		0		0.0	0.0	0.0	0		0			
1362	Մուտքեր համայնքի բյուջեի նկատմամբ ստանձնած պայմանագրային պարտավորությունների չկատարման	0				0		0		0.0	0.0	0.0	0		0			
1370	3.7 Ընթացիկ ոչ պաշտոնական դրամաշնորհներ (տող 1371 + տող 1372), այդ թվում՝	7441	0	0	0	0	0	0	0	0	0.0	0.0	0.0	0	0	0	0	0
	այդ թվում՝																	
1371	Ֆիզ. անձ. և կազմ. նվիրաբեր-ից համայնքին, վերջ. ենթ. բյուջ. հիմն. տնօրինմ. անց. գույքի (հիմն. միջոց կամ ոչ նյութ. ակտիվ չհանդիս.) իրաց-ից և դրամ. միջ-ից ընթ. ծախս-ի ֆինանս. համար համայնքի բյուջե ստաց. մուտք՝	0				0		0		0.0	0.0	0.0	0		0			

	բյուջետային հիմն. տնօրինման անցած գույքի (հիմն. միջոց կամ ոչ նյութ. ակտիվ չհանդիս.) իրացումից և դրամական միջոցներից ընթ. ծախսերի ֆինանս.		0			0			0			0.0	0.0	0.0	0			0			
1380	3.8 կապիտալ ոչ պաշտոնական դրամաշնորհներ (տող 1381 + տող 1382), այդ թվում՝	7442	9145.6	0	9145.6	0	0	0	0	0	0	0.0	0.0	0.0	750	0	750	750	0	750	
1381	Նվիրատվ. ժառանգ. իրավ. ֆիզիկ. անձ. և կազմակ. համայնք. վերջ. ենթ. բյուջետ. հիմն արկ. տնօրին. անցած գույքի (հիմնական միջոց կամ ոչ նյութական ակտիվ չհանդիսացող) իրաց. և դրամ. միջոց. կապիտալ ծախսերի ֆինանս. համ. համայնքի բյուջե ստացված				4430.9	0			0			0.0	0.0	0.0	0			0			
1382	Նվիր. ժառանգ. իրավ-ով ֆիզ. անձ. և կազմակերպ-ից համ-ին, վերջինիս ենթ. բյուջ. հիմն. տնօրին. անցած գույքի (հիմն. միջ. կամ ոչ նյութ. ակտ. չհանդ.) իրաց-ից և դրամ. միջ-ից կապ. ծախս.		4714.7			0			0			0.0	0.0	0.0	750		750			750	
1390	3.9 Այլ եկամուտներ (տող 1391 + տող 1392 + տող 1393), այդ թվում՝	7451	144698.8	97254.1	47444.7	43068.5	2069.8	40999	60000	0	60000	16,931.5	(2,069.8)	19,001.3	66252.5	0	66252.5	75858	0	75858	
	այդ թվում՝				362.5	0			0			0.0	0.0	0.0	0			0			
1391	Համայնքի գույքին պատճառած վնասների փոխհատուցումից մուտքեր		362.5						0			0.0	0.0	0.0	0			0			
1392	Վարչական բյուջեի պահուստային ֆոնդից ֆոնդային բյուջե կատարվող		47082.2			40998.7		40999	60000		60,000.0	19,001.3	0.0	19,001.3	66252.5		66,252.5	75858		75,858.0	2026թ-ին ավելի շատ խառնուրդ
1393	Օրենքով և իրավական այլ ակտերով սահմանված՝ համայնքի բյուջեի մուտքագրման ենթակա այլ եկամուտներ		97254.1		97254.1	2069.8	2069.8		0		0.0	(2,069.8)	(2,069.8)	0.0	0			0	0.0		

ՀՀ Շիրակի մարզի Ամասիա համայնքի 2024-2026թթ. միջնաժամկետ ծախսերի ծրագրերի դեֆիցիտի (պակացուրդի) ֆինանսավորումը ըստ աղբյուրների

Տողի NN	Բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների անվանումները	NN	2024 փաստացի			2025 հաստատված			2026 թվական			2026թ կանխատեսված և 2025թ հաստատված բյուջեի տարբերություն			2027 թվական			2028 թվական			Ծանոթություն
			Ընդամենը	այդ թվում՝		Ընդամենը	այդ թվում՝		Ընդամենը	այդ թվում՝		Ընդամենը	այդ թվում՝		Ընդամենը	այդ թվում՝		Ընդամենը	այդ թվում՝		2026թ կանխատեսված և 2025թ հաստատված բյուջեի
				վարչական բյուջե	ֆոնդային բյուջե		վարչական բյուջե	ֆոնդային բյուջե		վարչական բյուջե	ֆոնդային բյուջե		վարչական բյուջե	ֆոնդային բյուջե		վարչական բյուջե	ֆոնդային բյուջե		վարչական բյուջե	ֆոնդային բյուջե	
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17	18	19	20	21	22
8010	ԸՆԴԱՍՏԵՆԸ (տող 8100+տող 8200), (տող 8000 հավաքակ նշանով)		-53,744.7	-100,019.7	46,275.0	116,526.8	0.0	116,526.8	0.0	0.0	0.0	-116526.8	0.0	-116526.8	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	
	այդ թվում՝											0.0	0.0	0.0							
8100	Ա. ՆԵՐՔԻՆ ԱՐԲՅՈՒՐՆԵՐ (տող 8110+տող 8160)		-53,744.7	-100,019.7	46,275.0	116,526.8	0.0	116,526.8	0.0	0.0	0.0	-116526.8	0.0	-116526.8	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	
	այդ թվում՝											0.0	0.0	0.0							
8110	Օգնագործման ուղղութեանը կամ դեֆիցիտի (դավաճանության)		0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	
	այդ թվում՝											0.0	0.0	0.0							
8111	1.1. Արժեքների (բացառությամբ բաժնետոմսերի և կապիտալում այլ մասնակցության) (տող 8112+տող 8113)		0.0	X	0.0	0.0	X	0.0	0.0	X	0.0	0.0	X	0.0	0.0	X	0.0	0.0	X	0.0	
	որից՝											0.0	0.0	0.0							
8112	- թողարկումից և տեղաբաշխումից մուտքեր	9111	0.0	X		0.0	X		0.0	X		0.0	X	0.0	0.0	X		0.0	X		
8113	- հիմնական գումարի մարում	6111	0.0	X		0.0	X		0.0	X		0.0	X	0.0	0.0	X		0.0	X		
8120	1.2. Վարկեր և փոխառություններ (ստացում և մարում) (տող 8121+տող8140)		0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	
	այդ թվում՝											0.0	0.0	0.0							
8121	1.2.1. Վարկեր (տող 8122+տող 8130)		0.0	X	0.0	0.0	X	0.0	0.0	X	0.0	0.0	X	0.0	0.0	X	0.0	0.0	X	0.0	
	որից՝											0.0	0.0	0.0							
8122	- վարկերի ստացում (տող 8123+տող 8124)	9112	0.0	X	0.0	0.0	X	0.0	0.0	X	0.0	0.0	X	0.0	0.0	X	0.0	0.0	X	0.0	
	որից՝											0.0	0.0	0.0							
8123	պետական բյուջեից		0.0	X		0.0	X		0.0	X		0.0	X	0.0	0.0	X		0.0	X		
8124	այլ աղբյուրներից		0.0	X		0.0	X		0.0	X		0.0	X	0.0	0.0	X		0.0	X		
8130	- ստացված վարկերի հիմնական գումարի մարում (տող 8131+տող 8132)	6112	0.0	X	0.0	0.0	X	0.0	0.0	X	0.0	0.0	X	0.0	0.0	X	0.0	0.0	X	0.0	
	որից՝											0.0	0.0	0.0							
8131	ՀՀ պետական բյուջեից		0.0	X																	

	որից՝										0.0	0.0	0.0						
8162	- համայնքային սեփականության բաժնետոմսերի և կապիտալում համայնքի մասնակցության իրազեկմից մուտքեր	9213		X			X		X		0.0	X	0.0		X		X		
8163	- իրավ. անձ. կանոնադր. կապիտալում պետ. մասնակց. պետ. սեփակ. հանրիսացող անշարժ գույքի (բացառ. հողերի), այդ թվում՝ անավարտ շինարար. օբյեկտների մասնավորեցումից՝ ստացաճ. միջոց-ից համայնքի բյուջե մասնավորումից մուտքեր	9213	0.0	X		0.0	X		0.0	X	0.0	X	0.0	0.0	X		0.0	X	
8164	- բաժնետոմսեր և կապիտալում այլ մասնակցություն ձեռքբերում	6213	0.0	X		0.0	X		0.0	X	0.0	X	0.0	0.0	X		0.0	X	
8170	2.2. Փոխառվություններ		0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0
	որից՝										0.0	0.0	0.0						
8171	- նախնական տրամադրված փոխառվությունների դիմաց ստացվող մարումներից մուտքեր	9212	0.0			0.0			0.0		0.0	0.0	0.0	0.0			0.0		
8172	- փոխառվությունների տրամադրում	6212	0.0			0.0			0.0		0.0	0.0	0.0	0.0			0.0		
8190	2.3. Համայնքի բյուջեի միջոցների տարեկանի ազատ մնացորդ՝ (տող 8191+տող 8194-տող 8193)		62,782.1	0.0	62,782.1	116,526.8	0.0	116,526.8	0.0	0.0	0.0	-116526.8	0.0	-116526.8	0.0	0.0	0.0	0.0	0.0
	այդ թվում՝											0.0	0.0	0.0					
8191	2.3.1. Համայնքի բյուջեի վարչական մասի միջոցների տարեկանի ազատ մնացորդ	9320	54,896.0	54,896.0	X	100,019.7	100,019.7	X	0.0		X	-100019.7	-100019.7	X	0.0		X	0.0	X
	որից՝											0.0	0.0	0.0					
8192	- ենթակա է ուղղման համայնքի բյուջեի վարչական մասից նախորդ տարում Ֆինանսավորման ենթակա, սակայն չֆինանսավորված՝ առկա պարտավորությունների կատարմանը		0.0		X	0.0		X	0.0		X	0.0	0.0	X	0.0		X	0.0	X
8193	- ենթակա է ուղղման համայնքի բյուջեի ֆոնդային մաս (տող 8191 - տող 8192)		54,896.0	54,896.0	X	100,019.7	100,019.7	X	0.0	0.0	X	-100019.7	-100019.7	X	0.0	0.0	X	0.0	X
8194	2.3.2. Համայնքի բյուջեի ֆոնդային մասի միջոցների տարեկանի մնացորդ (տող 8195 + տող 8196)	9330	62,782.1	0.0	62,782.1	71,403.1	0.0	116,526.8	0.0	0.0	0.0	-71403.1	0.0	-116526.8	0.0	0.0	0.0	0.0	0.0
	որից՝											0.0	0.0	0.0					
8195	- առանց վարչական մասի միջոցների տարեկանի ազատ մնացորդից ֆոնդային մաս մուտքագրման ենթակա գումարի		7,886.1	X	7,886.1	16,507.1	X	16,507.1		X		-16507.1	X	-16507.1	0.0	X		0.0	X
8196	- վարչական մասի միջոցների տարեկանի ազատ մնացորդից ֆոնդային մաս մուտքագրման ենթակա գումարը (տող 8193)		54,896.0	X	54,896.0	54,896.0	X	100,019.7		X		-54896.0	X	-100019.7	0.0	X		0.0	X
8197	2.4. Համայնքի բյուջեի ֆոնդային մասի ժամանակավոր ազատ միջոցների տրամադրում վարչական մաս		X	X	X	X	X	X	X	X	X	X	X	X	X	X	X	X	X
8198	2.5. Համայնքի բյուջեի ֆոնդային մասի ժամանակավոր ազատ միջոցներից վարչական մաս տրամադրված միջոցների վերադարձ ֆոնդային մաս		0.0	X		0.0	X		0.0	X		0.0	X	0.0	0.0	X		0.0	X
